ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ
ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

ՀՐԱՄԱՆ

No 189 - Ա/3 «02» 06 2025թ.

«ԻՔՍ-ԱՐԹ» ՍՊԸ-ԻՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «ՀՀԿԳՄՍՆԷԱՃԱՊՁԲ-25/65» ծածկագրով էլեկտրոնային աճուրդով գնահատող հանձնաժողովի մայիսի 20-ի որոշումը առ այն, որ «Իքս-Արթ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում եղել են անհամապատասխանություններ (բացակայել են հրավերով պահանջվող 2-րդ չափաբաժնի մասով առաջարկված ապրանքների արտադրողը, ֆիրմային անվանումը և մոդելը), որոնք շտկման համար տրված ժամանակահատվածի ավարտից հետո մասնակցի կողմից ամբողջությամբ չեն շտկվել՝ անխափան սնուցման աղբյուրի մարտկոցի աշխատանքը նշվել է առնվազն 10 րոպե, այն դեպքում, երբ պաշտոնական տեղեկատվության համաձայն առաջարկվող մոդելի մարտկոցի աշխատանքը 3 րոպե է և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2–րդ մասով և «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

«Իքս-Արթ» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 01237555, ք. Երևան, ՀՀ, ք. Երևան, Հր.Քոչար 13/1) ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

6/2/2025

X

ՀԱՍՄԻԿ ՀԱԿՈԲՅԱՆ

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Signed by: HAKOBYAN HASMIK 5610800161 **Հ. ՀԱԿՈԲՅԱՆ**